

կարմրագոյն քարերով, առանց սեան վեր բռնելով խորշորոշեայ գմբէթը, չորս լուսամտիւք, արտաքուստ սիւնա- զարդ և սրանկիւն կամարներ անոնց վրայ, որով Անույ եկեղեցեաց ձևէն կը հեռանայ. երկը քանդակազարդ մեծ պատուհաններով դէպ յարեւելեան- հիւսիս և 'ի հարաւ: Սեղանն վեց մեղր երկայն և քիչ մը պակաս լայն՝ երկու կողմանէ ունի աւանդատուններ և մա- տուռներ, իւրաքանչիւրն 3 մեղր եր- կայն, 1,75 լայն, յատակքն բեմէն քիչ մը ցած, և դուռն յարեւմտից: Կիսա- բոլոր խորանին ետեւ ցած և փոքր եօթն լուսամուտը կան, կամարակապ և սիւ- նազարդ, նկարաձև քարաշար միահետ քուշ տակ: Անույ կաթողիկէին պէս ա- սոր արտաքին որմոց վրայ ալ անկիւնա- ձև գոգացեալ խորշեր կան: Ժամա- տունն գրեթէ հաւասարաչափ մեծու- թեան տաճարին՝ քայքայուած է. և կործանուած են բազմանկիւնի միա- կուր չորս սիւնքն՝ որոնք զյարկը վեր կը վերցընէին. այլ հիմայ 'ի նորեկ բնակ- չաց վեր 'ի վերոյ շինուելով, արօթից տեղ եղած է. բայց երկու կողմերէն կանգուն կը կենան երկու փոքր մա- տուռներ կամ եկեղեցիներ սրածայր գմբէթաւորը՝ կարմրագոյն քարերով կառուցած. այլ վասն զի որմոց արտա- քին երեսաց քարերը վերջի եկողներն

վերուցած են՝ կը մնան անգիր և անյի- շատակ »: — Ասոնց քով կը յիշատակէ հեղինակն գերեզմաններ և անոնց հե- տաքրքրական տապանադիրերը, զորս կամեցողն կրնայ կարգալ նոյն իրեն ճոխ մատենին մէջ ինչպէս նաև այն երկար արձանագիրն, քսան և մի տու- ղով գրուած, որ կը յայտնէ եկեղեցւոյն նորոգութիւնը շինութենէն երկու հա- ռիւր տարի վերջը (1225), Պահլաու- նեաց զարմի պայազատաց ձեռքը: Իւ- ապա կը յաւելու:

« Գրիգորի եպիսկոպոսի արձանա- գիրն կը ցուցընէ որ այս տեղ երկու վանք կային, մին Մարմաշէն ստորա- գրածնիս՝ որ միւսոյն քով Մեճ կը կո- չուի. իսկ միւսն Վերի վանք, վասն զի քիչ մը հեռու մեծին արեւելեան հիւ- սիսային կողմն է՝ ձորոյն լանջակողման վրայ, վարինէն՝ փոքր վտակաւ բաժ- նուած, այլ աւրուած է, և միայն հիւ- սիսային որմն կանգուն կը կենայ. Սո- փիայ տիկնոջ գերեզմանն հօս էր: Այս վերին վանացս հիւսիսային կողմը քար- այր մը կայ, յորում հիմայ ևս գեղին բնակիչքը կ'ապաստանին: — Մարիա- մայ թագուհւոյն արձանագիրն կը յայտնէ մեզ Ս. Պետրոսի անուամբ ե- կեղեցի մ'ալ: Սեւան եկեղեցի կոչուած, թերեւ երկու սրագմբէթ մատուռնե- րէն մին ըլլայ »:

ԱՌԱՄԻ

Ինձ սիրելի՛ 'ի տրտմութեան ժամն պիտի, թէ չէ՝ յուրախութեան ժամն ամէնն են ինձ սի- րելի:

Ձուտք 'ի կաւն դնես, 'ի փոյ պատրաստ կացիր ⁽¹⁾, գձեռնդ 'ի ծակն կու տանիս, 'ի յօ- ձոյ խածանելոյ պատրաստ կացիր:

Ձինչ մարդ՝ որ ասացին թէ ճարտար է, դիւ- բաւ յակնատն ⁽²⁾ անկանէ:

Խօսքն զինչ ճաւհար ⁽³⁾ է, 'ի սաստաֆի մէջն դիր, մի՛ ամէն տեղ ցրուել, այլ 'ի սառաֆ ⁽⁴⁾ տնւր:

Ի կաքաւի կաքաւելոյն՝ երեք հարիւր ճանկ արծուոյ պատրաստ է, 'ի մէկ ծիծաղելոյն՝ եր- կու հարիւր հետ լաց:

Արեգակն որ քան զամենայն արարածս 'ի բարձր է, փոքր մի ամալ 'ի գէժն կանգնի՝ բոլորն կու խաւարի. հետ վատին քիչ նիւտ, թէ չէ՝ վատ կու դառնաս:

Ով մօտ լուսնակն նստի, երեսն նման լուսնի պայծառանայ. ով մօտ սև պտկի նստի, երեսն նման նմա լինի:

Ով շատ դատած՝ նա դատարկ ելած:

(1) Ձգուլ կաց:
(2) Գորգապիթ:

(3) Զեւեհէր, ափ:
(4) Սեղանաւոր: